ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ֆիզկուլտուրայի հրահանգչի և դաստիարակի թափուր տեղերի մրցույթի հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ «Երևանի Հ.152 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի ***0,5 դրույք ֆիզ.հրահանգչի և 0,5 դրույք դաստիարակի*** թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել

-դիմում (Ձև 1)

-կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ)

-անձը հաստատող փաստաթուղթ

-աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում)

-ինքնակենսագրություն (Ձև4)

-մեկ լուսանկար 3×4 չափի

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ

-ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական

-հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում)

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և վերադարձնում բնօրինակները: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել թերությունները և համալրել փաստաթղթերի ցանկը:

Փաստաթղթերն ընդունվում են 2024թ. հունվարի 22-ից մինչև փետրվարի 19-ը, ամեն օր՝ ժամը 10:00-17:00, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2024թ. փետրվարի 26-ին՝ **ժամը 11:00-ին**, «Երևանի հ.152 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ում, հասցեն՝ ք.Երևան, Ազատության 4ա:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (010) 204 480 հեռախոսահամարով:

Կրթ., մշակ. և սպորտի բաժին
Կատ.՝ Ն.Ստեփանյան
հեռ. 011-51-88-41